

(Վանայ Արձէշ գաւառի) վանահայր Զաքէոս եպս.ին հղբորորդին էր, ու անոր վախճանումէն յետոյ վանահայր կարգուեցաւ նոյն վանքին. (Նօսարֆ, էջ 20 եւ 31). ապրած կը թուի մինչև ՊՂԸ (= 1449) թուականը (նոյն. էջ 160): Կարապետ վրդ. ՊԿԵ (= 1416) թուին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, ուր նոյն թուականին Ս. Յարութեան տաճարին մէջ Յովհաննէս քհ.ին ընդօրինակել կուտայ Աւետարան մը, եւ վերագարծին կը նուիրէ զայն Արծուաբեր վանքին: Զեռագրին յիշատակարանը նոյնութեամբ կ'ընդօրինակենք հոս. « . . . Արդ զրեցաւ սա ձեռամբ Յովհաննէս սուտ անուն քահանայի . . . ի մեծափառ եւ ի գերահրաշատուածակոխ քաղաքս հրուսաղէմ. ի թուականիս Հայոց ՊԿԵ (= 1406), ի մէջ Յարութեանս, ի գուռն Սուրբ Գերեզմանիս. և ընդ հովանեաւ Սուրբ Գողգոթայի. և այլ տնօրինականոցս Քրիստոսի Այ. մերոյ: Դարձեալ ես նուաստս ի բանասիրաց և վերջինս ի վարդապետաց, Կարապետ կարօտ բանի փափաքող էի Աստուածաբնակ քաղաքին երուսաղէմի. որ բազում անգամ ջանայի գնալ և ոչ յաջողէր. . . զի բուռն էր հարկապահանջութիւն Ղարայ Ուսուֆ խանին ի վերայ մեր. . . և ի միւսում տարին զութ մարմնական ծնողաց նեղեաց զմեզ, եւ բնական աշխարհի սովորութիւն. եւ խնդրեցաք յԱստուծոյ հասուցանել զմեզ (յերուսաղէմէ) յերկիրս Քաջբերունի ի վանքս Սուրբայ. որ այժմ Խառարաստայ վանք կոչի. ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի տաճարիս: Եւ տեսեալ իմ զսուրբ Աւետարանս. ի յերուսաղէմ. գրեալ ձեռամբ Յովնաննէս կրօնաորիին որ փակակալ էր Աստուածային Սուրբ Գերեզմանին. և ջանալստ Սուրբ Գողգոթային. եւ գրեալ ի մեջ Սուրբ Յարութեան. վասն որոյ ցանկացող եղէ ես Կարապետ վարդապետս. զի յայն աւուրն էր գրեալ զԱւետարանս, որ Աստուածային խորհուրդ մատուցեալ էր ի Սուրբ Գողգոթայ, և զնեցի զսա ի հալալ վաստակոց իմոց, յիշատակինձ և ծնողաց իմոց. հօրեղբօրն իմում skr Զախեալի. . . և դառնալն իմում ոչ եղէ արժանի տեսանել զեղբայրն իմ զՅովնաննէս (աբեղայն) զի փոխեալ էր առ Քրիստոս. ի չար և ի դառն ժամանակիս, որ վերջացեալ էր Ղարայ Ուսուֆն. . . . և իմ այրեցեալ սրտիւ նուիրեցի զՍուրբ Աւետարանս դոռն Սուրբ Աստուածածնի տաճարիս. . . : Եւ զիս զՀայրապետ կազմողս յիշեցէք ի Քս.